

ԽՈՐՀՐԴԻ 1989 թվականի հունիսի 12-ի 89/391/ԵՏՀ ՀՐԱՀԱՆԳԸ

Աշխատավայրում աշխատողների անվտանգության ու առողջության բարելավմանն ուղղված միջոցների վերաբերյալ

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական տնտեսական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը և, մասնավորապես, դրա 118ա հոդվածը,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը, որը կազմվել է Աշխատավայրում անվտանգության, հիգիենայի և առողջության պահպանման հարցերով խորհրդատվական կոմիտեի (1) հետ խորհրդակցելուց հետո,

համագործակցելով Եվրոպական պառլամենտի հետ (2),

հաշվի առնելով Տնտեսական և սոցիալական հարցերով կոմիտեի եզրակացությունը (3),

քանի որ պայմանագրի 118ա հոդվածով նախատեսվում է, որ Խորհուրդը հրահանգների միջոցով պետք է ապահովի հատկապես աշխատանքային միջավայրի բարելավման խթանմանն ուղղված նվազագույն պահանջներ աշխատողների առողջության և անվտանգության պահպանման մակարդակի բարձրացման նպատակով,

քանի որ սույն Հրահանգը հիմք չէ՝ առանձին անդամ պետությունների կողմից արդեն ձեռք բերված պաշտպանության մակարդակը նվազեցնելու համար, երբ այդ անդամ պետությունները պայմանագրի համաձայն արդեն պարտավորություն են ստանձնել՝

խթանել այս ոլորտի պայմանների բարելավումը

և ներդաշնակեցնել նման պայմանները՝ պահպանելով արդեն ձեռք բերվածը,

քանի որ հայտնի է, որ աշխատողները կարող են աշխատավայրում ենթարկվել շրջակա միջավայրի վտանգավոր ազդեցությանն իրենց աշխատանքի ընթացքում,

քանի որ Պայմանագրի 118ա հոդվածի համաձայն՝ պետք է խուսափել նման հրահանգներով վարչական, ֆինանսական և իրավական այնպիսի սահմանափակումներ սահմանելուց, որոնք կխոչընդոտեն փոքր և միջին ձեռնարկությունների ստեղծումն ու զարգացումը,

քանի որ Հանձնաժողովի կողմից իր ծրագրերի վերաբերյալ հաղորդակցությունները, որոնք առնչվում են աշխատավայրում անվտանգության, հիգիենայի և առողջության

պահպանմանը, (4) նախատեսում են հրահանգների ընդունում՝ ուղղված աշխատողների անվտանգության և առողջության ապահովմանը,

քանի որ Խորհուրդը 1987 թվականի դեկտեմբերի 21-ի «Աշխատավայրում անվտանգության, հիգիենայի և առողջության պահպանման մասին» որոշմամբ անդրադարձել է Հանձնաժողովի կողմից Խորհրդին մոտ ապագայում «Աշխատավայրում աշխատողների անվտանգության և առողջության կազմակերպման մասին» հրահանգ ներկայացնելու հարցին,

քանի որ 1988 թվականի փետրվարին Եվրոպական պառլամենտը քննարկումներից հետո ներքին շուկայի և աշխատողների պաշտպանության մասին ընդունել է չորս բանաձև, և քանի որ այդ բանաձևերում Հանձնաժողովին կոչ էր արվում մշակել շրջանակային հրահանգ, որը կարող է հիմք լինել ավելի առանձնահատուկ հրահանգների ընդունման համար, որոնք պետք է ընդգրկեն աշխատավայրում անվտանգությանն ու առողջությանն առնչվող ռիսկերը, քանի որ անդամ պետությունները պարտավոր են խրախուսել աշխատողների առողջության ու անվտանգության ապահովումն իրենց տարածքում, քանի որ աշխատավայրում աշխատողների առողջությանն ու անվտանգությանն ուղղված միջոցառումները նույնպես նպաստում են, որոշ դեպքերում, պահպանելու առողջությունը և հնարավոր է նաև նրանց հետ բնակվող անձանց անվտանգությունը,

քանի որ անդամ պետությունների իրավական համակարգերը, որոնք կարգավորում են աշխատավայրում անվտանգության և առողջության հարցերը, զգալիորեն տարբերվում են և դրանք բարելավելու անհրաժեշտություն կա, քանի որ տվյալ առարկայի վերաբերյալ ազգային դրույթները, որոնք հաճախ ընդգրկում են տեխնիկական նկարագրություններ և (կամ) ինքնակարգավորվող չափանիշներ, կարող են հանգեցնել անվտանգության և առողջության պահպանման տարբեր մակարդակների, որն իր հերթին մրցակցության կհանգեցնի՝ վտանգի ենթարկելով մարդկանց անվտանգությունն ու առողջությունը,

քանի որ աշխատավայրում միջադեպերի և մասնագիտական հիվանդությունների թիվը դեռևս չափազանց բարձր է, քանի որ կանխիչ միջոցներ պետք է անհապաղ ներմուծվեն կամ բարելավվեն՝ աշխատողների անվտանգությունն ու առողջությունը երաշխավորելու և ավելի բարձր մակարդակի պաշտպանություն ապահովելու համար,

քանի որ պաշտպանության բարելավված մակարդակ ապահովելու համար աշխատողները և (կամ) նրանց ներկայացուցիչները պետք է տեղեկացվեն իրենց անվտանգությանը և առողջությանը սպառնացող ռիսկերի մասին և այն միջոցների մասին, որոնք անհրաժեշտ է

ձեռնարկել՝ այդ ռիսկերը նվազեցնելու կամ վերացնելու համար, և քանի որ նրանք նաև պետք է կարողանան իրենց ազգային օրենքների և (կամ) գործելակերպի համաձայն՝ հավասարակշռված մասնակցությամբ նպաստել, որպեսզի անհրաժեշտ կանխիչ միջոցներ ձեռնարկվեն,

քանի որ անվտանգության և առողջության հարցերի վերաբերյալ տեղեկությունների փոխանակումը, երկխոսությունը և հավասարակշռված մասնակցությունն աշխատավայրում պետք է իրականացվի գործատուների ու աշխատողների միջև և (կամ) նրանց ներկայացուցիչների միջոցով՝ ազգային օրենքներով և (կամ) գործելակերպով սահմանված համապատասխան ընթացակարգերի ու իրավական փաստաթղթերի համաձայն,

քանի որ աշխատավայրում աշխատողների անվտանգության, հիգիենայի և առողջության բարելավումը մի նպատակ է, որը չպետք է միայն տնտեսական նկատառումներից ելնելով զիջումների ենթարկվի,

քանի որ գործատուները պարտավոր են տեղեկացված լինեն տեխնոլոգիական և գիտական նվաճումների վերջին զարգացումներից՝ աշխատավայրի նախագծման մասին, հաշվի պետք է առնեն իրենց ձեռնարկությունում պոտենցիալ վտանգները, և համապատասխանաբար, տեղեկացնեն աշխատողների ներկայացուցիչներին, որոնք մասնակցային իրավունք ունեն սույն Հրահանգի համաձայն, այնպես որ կարողանան երաշխավորել աշխատողների առողջության և անվտանգության պահպանման ավելի բարձր մակարդակ,

քանի որ սույն Հրահանգի դրույթները կիրառվում են, չսահմանափակելով համայնքի առկա և ապագա առավել խիստ օրենսդրական դրույթների գործողությունը բոլոր ռիսկերի նկատմամբ, մասնավորապես այն ռիսկերի, որոնք կարող են ծագել 80/1107/ԵՏՀ (6) հրահանգով սահմանված քիմիական, ֆիզիկական և կենսաբանական նյութերի օգտագործման հետևանքով, որը վերջին անգամ փոփոխությունների է ենթարկվել 88/642/ԵՏՀ (7) հրահանգով,

քանի որ 74/325/ԵՏՀ (8) հրահանգի համաձայն Աշխատավայրում անվտանգության, հիգիենայի և առողջության հարցերով խորհրդատվական կոմիտեին այս ոլորտում առաջարկների մշակման վերաբերյալ խորհուրդ է տալիս Հանձնաժողովը,

քանի որ Կոմիտեն, որը բաղկացած է անդամ պետությունների կողմից առաջադրված մասնակիցներից, պետք է կազմավորվի՝ սույն Հրահանգով նախատեսված առանձին հրահանգների տեխնիկական համապատասխանությանն ուղղված Հանձնաժողովի աշխատանքներին աջակցելու համար:

ԲԱԺԻՆ I

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1

Կարգավորման առարկան

1. Սույն Հրահանգի կարգավորման առարկան միջոցների ներդրումն է, որն ուղղված է աշխատավայրում աշխատողների անվտանգության և առողջության բարելավմանը:
2. Այդ նպատակով այն պարունակում է ընդհանուր սկզբունքներ, որոնք վերաբերում են մասնագիտական հիվանդությունների ռիսկերի կանխմանը, անվտանգության և առողջության պահպանմանը, ռիսկի ու դժբախտ պատահարի գործոնների վերացմանը, տեղեկացմանը, խորհրդատվությանը, հավասարակշռված մասնակցությանը ազգային օրենքներին և (կամ) գործելակերպին համապատասխան ու աշխատողների ու նրանց ներկայացուցիչների ուսուցման անցկացմանը, ինչպես նաև այն պարունակում է նշված սկզբունքների իրականացման ընդհանուր ուղեցույց:
3. Սույն Հրահանգի դրույթները չպետք է հակասեն գործող կամ հետագա ազգային կամ Համայնքի դրույթներին, որոնք առավել նպաստավոր են աշխատավայրում աշխատողների անվտանգության և առողջության պահպանման համար:

Հոդված 2

Գործողության ոլորտը

1. Սույն Հրահանգը կիրառվում է գործունեության բոլոր հատվածներում՝ ինչպես հանրային, այնպես էլ մասնավոր (արդյունաբերական, գյուղատնտեսական, առևտրային, վարչական, ծառայությունների մատուցման, կրթական, մշակութային, հանգստի և այլն):
2. Սույն Հրահանգը չի կիրառվում այն դեպքում, երբ պետական ծառայության որոշ տեսակների, ինչպիսիք են՝ զինված ուժերը կամ ոստիկանությունը, կամ քաղաքացիական

պաշտպանության հատուկ ծառայություններին բնորոշ հատկանիշներն անխուսափելիորեն հակասում են Հրահանգին:

Նման դեպքում աշխատողների անվտանգությունն ու առողջությունը պետք է պահպանվի այնքանով, որքանով դա հնարավոր է սույն Հրահանգի նպատակների շրջանակներում:

Հոդված 3

Սահմանումները

Սույն Հրահանգի նպատակներով տվյալ հասկացությունները կիրառվում են հետևյալ իմաստներով.

ա) աշխատող՝ ցանկացած անձ, ով աշխատանքի է ընդունվել գործատուի կողմից, այդ թվում՝ ուսուցանվողները և փորձնակները՝ բացառությամբ տեղի ծառայողների,

բ) գործատու ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, ով աշխատանքային հարաբերությունների մեջ է գտնվում աշխատողի հետ և պատասխանատու է ձեռնարկության և (կամ) հիմնարկի համար,

գ) աշխատողների ներկայացուցիչը, ով հատուկ պատասխանատվություն է կրում աշխատողների անվտանգության և առողջության համար՝ ցանկացած անձ, ով ընտրվել կամ նշանակվել է ազգային օրենքներին և (կամ) գործելակերպին համապատասխան՝ աշխատողներին ներկայացնելու նպատակով, երբ խնդիրներ են ծագում աշխատավայրում աշխատողների անվտանգության և առողջության պահպանման հարցում,

դ) կանխում՝ բոլոր քայլերը կամ միջոցները, որոնք ձեռնարկվում կամ նախատեսվում են ձեռնարկվել ձեռնարկությունում աշխատանքի բոլոր փուլերում մասնագիտական հիվանդությունների ռիսկերը կանխելու կամ նվազեցնելու նպատակով:

Հոդված 4

1. Անդամ պետություններն անհրաժեշտ քայլեր են ձեռնարկում՝ ապահովելու, որ գործատուների, աշխատողների և աշխատողների ներկայացուցիչների նկատմամբ կիրառվեն այն իրավական դրույթները, որոնք անհրաժեշտ են սույն Հրահանգի կիրարկման համար:

2. Մասնավորապես, անդամ պետությունները պետք է ապահովեն համապատասխան հսկողություն և վերահսկողություն:

ԲԱԺԻՆ II

ԳՈՐԾԱՏՈՒՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 5

Ընդհանուր դրույթներ

1. Գործատուն պարտավոր է ապահովել աշխատողների անվտանգությունը և առողջությունը՝ ելնելով աշխատանքին առնչվող ցանկացած հանգամանքից:
 2. Երբ 7(3) հոդվածի համաձայն՝ գործատուն ցուցակում ընդգրկում է իրավասու արտաքին ծառայություններ կամ անձանց, դա իրեն չի ազատում այս ոլորտում իր պարտականություններից:
 3. Աշխատավայրում անվտանգության և առողջության հարցերում աշխատողների պարտականությունները չպետք է ազդեն այդ հարցերում գործատուի պարտականության սկզբունքի վրա:
 4. Սույն Հրահանգը չի սահմանափակում անդամ պետությունների ընտրության իրավունքը գործատուներին ազատելու նման պարտականությունից կամ սահմանափակելու այն, երբ միջադեպը տեղի է ունենում անսովոր ու անկանխատեսելի հանգամանքներում, որոնք վեր են գործատուի հսկողությունից կամ բացառիկ դեպքեր են, որոնցից նույնիսկ պատշաճ զգուշություն ցուցաբերելու դեպքում անհնարին է խուսափել:
- Անդամ պետությունները կարող են չկիրառել առաջին ենթապարբերությունում նշված ընտրության իրավունքը:

Հոդված 6

Գործատուների ընդհանուր պարտականությունները

1. Իր պարտականությունների շրջանակում գործատուն պետք է ձեռնարկի այնպիսի միջոցներ, որոնք անհրաժեշտ են աշխատողների անվտանգության և առողջության պահպանման համար՝ ներառյալ մասնագիտական հիվանդությունների ռիսկերի կանխումը և տեղեկատվության տրամադրումը, ուսուցման անցկացումը, ինչպես նաև անհրաժեշտ աշխատանքների կազմակերպումն ու միջոցների տրամադրումը: Գործատուն պետք է ուշադիր լինի և միջոցներ ձեռնարկի՝ հաշվի առնելով փոփոխվող հանգամանքները, ինչպես նաև նպատակադրվի բարելավելու առկա իրավիճակը:

2. Գործատուն իրականացնում է առաջին պարբերության առաջին ենթապարբերությունում նշված միջոցները՝ հենվելով կանխման հետևյալ ընդհանուր սկզբունքների վրա.

ա) ռիսկերից խուսափում,

բ) այնպիսի ռիսկերի գնահատում, որոնցից հնարավոր չէ խուսափել,

գ) ռիսկերի վերացումն սկզբնաղբյուրում,

դ) աշխատանքի հարմարեցումն անհատին, մասնավորապես, աշխատավայրերի նախագծումը, աշխատանքային սարքավորումների ընտրությունը և աշխատանքային ու արտադրման մեթոդների ընտրությունը՝ նպատակ ունենալով, մասնավորապես, փոփոխելու նույնանման աշխատանքը, ինչպես նաև սահմանված աշխատանքային դրույքով աշխատանքը և նվազեցնելու դրանց ազդեցությունը առողջության վրա,

ե) տեխնիկական առաջընթացին հարմարեցումը,

զ) վտանգավոր հանգամանքների վերացումը կամ նվազ վտանգավոր դարձնելը,

է) կանխման համապարփակ քաղաքականության մշակումը, որն ընդգրկում է տեխնոլոգիան, աշխատանքի կազմակերպումը, աշխատանքային պայմանները, սոցիալական հարաբերություններին և աշխատանքային միջավայրին առնչվող գործոնների ազդեցությունը,

ը) կոլեկտիվ պաշտպանիչ միջոցների առաջնային համարելը անհատական պաշտպանիչ միջոցառումների համեմատությամբ,

թ) համապատասխան ցուցումներ աշխատողներին տալը:

3. Չհակասելով սույն Հրահանգի մյուս դրույթներին՝ գործատուն պետք է հաշվի առնի ձեռնարկության և (կամ) հիմնարկի գործունեության բնույթը՝

ա) գնահատի աշխատողների անվտանգությանն ու առողջությանը սպառնացող ռիսկերը՝ հաշվի առնելով աշխատանքային սարքերի ընտրությունը, քիմիական նյութերի կամ պատրաստուկների օգտագործումը և աշխատավայրերի տեխնիկական համալրումը:

Նման գնահատումից հետո և, ըստ անհրաժեշտության, կիրառելով կանխման միջոցները, ինչպես նաև աշխատանքային ու արտադրման մեթոդները, գործատուն պետք է.

–ապահովի աշխատողների անվտանգության և առողջության պահպանման մակարդակի բարձրացում,

–ընդգրկված լինի ձեռնարկության և (կամ) հիմնարկի գործունեության բոլոր շրջանակներում և ստորակարգության բոլոր մակարդակներում,

բ) հաշվի առնի աշխատողի կարողությունները անվտանգության և առողջության հարցերի առումով, երբ աշխատողին աշխատանք է հանձնարարում,

գ) ապահովի, որ նոր տեխնոլոգիաների նախատեսումն ու ներմուծումը քննարկվեն աշխատողների և (կամ) նրանց ներկայացուցիչների հետ, սարքերի ընտրության, աշխատանքային պայմանների ու աշխատանքային միջավայրի առումով աշխատողների անվտանգության և առողջության պահպանման համար,

դ) համապատասխան քայլեր ձեռնարկի՝ ապահովելով, որ միայն այն աշխատողները, ովքեր ստացել են համապատասխան ցուցումներ, կարող են մուտք գործել այն ոլորտները, որտեղ լուրջ ու առանձնահատուկ վտանգ կա:

4. Չհակասելով սույն Հրահանգի մյուս դրույթներին, երբ մի քանի ձեռնարկություններ գտնվում են նույն աշխատանքային վայրում, աշխատողները պետք է համագործակցեն՝ անվտանգության, առողջության և մասնագիտական հիգիենայի վերաբերյալ դրույթների կիրառման հարցում, և հաշվի առնելով՝ գործունեության բնույթը, պետք է համակարգեն իրենց գործողությունները մասնագիտական ռիսկերից պաշտպանվելու և դրանք կանխելու հարցում և պետք է տեղեկացնեն նման ռիսկերի մասին մեկը մյուսին, ինչպես նաև իրենց համապատասխան աշխատողներին և (կամ) աշխատողների ներկայացուցիչներին:

5. Աշխատավայրում անվտանգության, հիգիենայի և առողջության պահպանմանն ուղղված միջոցները ոչ մի դեպքում չպետք է աշխատողների դրամական միջոցների հաշվին իրականացվեն:

Հոդված 7

Պաշտպանության և կանխման ծառայությունները

1. Չհակասելով 5-րդ և 6-րդ հոդվածներում նշված պարտականություններին՝ գործատուն նշանակում է մեկ կամ ավելի աշխատողների, որոնք գործողություններ կիրականացնեն՝ ուղղված ձեռնարկությունում և (կամ) հիմնարկում մասնագիտական ռիսկերից պաշտպանությանը և դրանց կանխմանը:

2. Նշանակված աշխատողները չեն կարող հայտնվել անբարենպաստ վիճակում մասնագիտական ռիսկերից պաշտպանությանն ու դրանց կանխմանն ուղղված իրենց գործողությունների պատճառով:

Նշանակված աշխատողներին պետք է տրվի բավարար ժամանակ՝ նրանց հնարավորություն տալով իրականացնելու իրենց պարտականությունները, որոնք բխում են սույն Հրահանգից:

3. Եթե նման պաշտպանիչ ու կանխիչ միջոցները չեն կարող կազմակերպվել ձեռնարկությունում և (կամ) հիմնարկում իրավասու աշխատակազմի բացակայության պատճառով,

գործատուն ընդգրկում է իրավասու արտահաստիքային աշխատողների կամ օգտվում արտաքին ծառայություններից:

4. Երբ գործատուն օգտվում է նման ծառայություններից կամ ցուցակում ընդգրկում է արտահաստիքային աշխատողների, նա նրանց տեղյակ է պահում այն գործոնների մասին, որոնք բացահայտ բացասական ազդեցություն ունեն կամ հնարավոր է նման ազդեցություն ունենան աշխատողների անվտանգության և առողջության վրա: Նման աշխատողների համար պետք է հասանելի լինի 10 (2) հոդվածում նշված տեղեկությունը:

5. Բոլոր դեպքերում՝

–նշանակված աշխատողները պետք է ունենան անհրաժեշտ կարողություններ և անհրաժեշտ միջոցներ,

–խորհրդատվություն մատուցող արտաքին ծառայությունները պետք է ունենան անհրաժեշտ աշխատակազմ ու մասնագիտական միջոցներ, իսկ արտահաստիքային աշխատողները՝ անհրաժեշտ ընդունակություններ և

–նշանակված աշխատողները և խորհրդատվություն մատուցող արտաքին ծառայությունները կամ արտահաստիքային աշխատողները, պետք է զգալի թվով լինեն,

որպեսզի գործ ունենան պաշտպանիչ ու կանխիչ միջոցների կազմակերպման հետ, հաշվի առնելով ձեռնարկության և (կամ) հիմնարկի չափը, աշխատողների տեղաբաշխումն ամբողջ ձեռնարկությունում և (կամ) հիմնարկում և (կամ) այն վտանգը, որին ենթարկվում են աշխատողները:

6. Սույն հոդվածի առարկան հանդիսացող առողջության և անվտանգության ռիսկերից պաշտպանությունն ու դրանց կանխումը մեկ կամ ավելի աշխատողների, մեկ արտաքին կամ ներքին ծառայության, կամ առանձին ծառայությունների պարտականությունն է:

Աշխատողը (աշխատողները) և (կամ) գործակալությունը (գործակալությունները) պետք է, անհրաժեշտության դեպքում, համատեղ աշխատեն:

7. Անդամ պետությունները, ելնելով ձեռնարկությունների գործունեության բնույթից և չափից, կարող են սահմանել, ձեռնարկությունների այնպիսի տեսակներ, որոնցում աշխատողը, պայմանով, որ իրավասու է, կարող է ինքնուրույն կատարել 1–ին պարբերությունում նշված միջոցների մասով պարտականությունը:

8. Անդամ պետությունները պետք է սահմանեն 5–րդ պարբերությունում նշված անհրաժեշտ կարողությունները և ունակությունները:

Նրանք կարող են սահմանել 5–րդ պարբերությունում նշված բավարար թիվը:

Հոդված 8

Առաջին օգնություն, հրդեհի մարում և աշխատողների տարհանում, լուրջ ու սպառնացող վտանգ

1. Գործատուն պարտավոր է՝

–անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել՝ առաջին օգնություն ցույց տալու, հրդեհը մարելու և աշխատողներին տարհանելու համար, միջոցներ, որոնք համապատասխանում են

ձեռնարկության և (կամ) հիմնարկի գործունեությանն ու չափին և որոնք ձեռնարկելիս՝ հաշվի են առնվում ներկա գտնվող այլ անձինք,

–արտաքին ծառայությունների հետ անհրաժեշտ կապն ապահովել, մասնավորապես, առաջին բուժօգնության, շտապօգնության, փրկարար աշխատանքի և հրդեհի մարման հարցերի առումով:

2. 1-ին պարբերության համաձայն՝ գործատուն պարտավոր է առաջին օգնություն ցույց տալու, հրդեհը մարելու և աշխատողներին տարհանելու համար աշխատողներ նշանակել, ովքեր պետք է նման միջոցներ ձեռնարկեն: Նման աշխատողների թիվը, նրանց համար անցկացվող ուսուցումը և հասանելի սարքերը պետք է բավարար լինեն՝ հաշվի առնելով ձեռնարկության և (կամ) հիմնարկի չափը և (կամ) առանձնահատուկ վտանգները:

3. Գործատուն պարտավոր է՝

ա) հնարավորինս շուտ տեղեկացնել աշխատողներին, ովքեր ենթարկվում են կամ կարող են ենթարկվել լուրջ ու վերահաս վտանգի, առկա ռիսկերի և այն քայլերի մասին, որոնք ձեռնարկվել են կամ ձեռնարկվելու են՝ համապատասխան պաշտպանություն ապահովելու համար,

բ) գործողություն ձեռնարկել և ցուցումներ տալ, որպեսզի լուրջ, վերահաս ու անխուսափելի վտանգի դեպքում աշխատողներին հնարավորություն ընձեռնվի դադարեցնելու աշխատանքը և (կամ) անմիջապես թողնել աշխատավայրն ու տեղափոխվել անվտանգ տարածք,

գ) բացառությամբ առանձին դեպքերի, երբ պատշաճ կերպով հիմնավորված պատճառներ կան, աշխատողներից չպահանջել, որ նրանք վերսկսեն աշխատանք այնպիսի աշխատանքային իրավիճակում, երբ դեռ առկա է լուրջ ու վերահաս վտանգ:

4. Այն աշխատողները, ովքեր լուրջ, վերահաս ու անխուսափելի վտանգի առկայության պարագայում թողնում են իրենց աշխատանքային վայրը և (կամ) վտանգավոր տարածքը, չեն կարող որևէ կերպ անբարենպաստ վիճակի մեջ դրվել իրենց աշխատանքային պարտականությունները կատարելիս, պետք է պաշտպանվեն ցանկացած վտանգավոր և անհիմն հետևանքներից՝ ազգային օրենքների և (կամ) գործելակերպի համաձայն:

5. Գործատուն պարտավոր է ապահովել, որ բոլոր աշխատողները հնարավորություն ունենան՝ իրենց (կամ) այլ անձանց անվտանգությանը սպառնացող լուրջ ու վերահաս վտանգի դեպքում, ինչպես նաև այն դեպքում, երբ անմիջական ղեկավարի հետ հնարավոր

չէ կապ հաստատել, համապատասխան քայլեր ձեռնարկել՝ իրենց գիտությամբ և տրամադրության տակ գտնվող տեխնիկական միջոցներն օգտագործելով, խուսափեն նման վտանգի հետևանքներից:

Նրանց գործողությունները չպետք է անբարենպաստ վիճակի մեջ դնեն իրենց, բացառությամբ այն դեպքերի, երբ նրանք անզգույշ կամ անփույթ են գտնվել:

Հոդված 9

Գործատուների ընդհանուր պարտականությունները

1. Գործատուն պարտավոր է՝

ա) կարողանալ գնահատել աշխատավայրում անվտանգությանն ու առողջությանը սպառնացող ռիսկերը՝ ներառյալ այն ռիսկերը, որոնք կարող են սպառնալ մի խումբ աշխատողների,

բ) որոշում կայացնել ձեռնարկվող պաշտպանիչ միջոցների և, անհրաժեշտության դեպքում, պաշտպանիչ սարքերի օգտագործման մասին,

գ) կազմել մասնագիտական դժբախտ պատահարների ցուցակ, որոնց հետևանքով աշխատողը կարող է ավելի քան երեք աշխատանքային օր անաշխատունակ համարվել,

դ) զեկույցներ կազմել պատասխանատու մարմինների համար՝ ազգային օրենքների և (կամ) գործելակերպի համաձայն՝ մասնագիտական այն դժբախտ պատահարների վերաբերյալ, որոնց ենթարկվել են իր աշխատողները:

2. Անդամ պետությունները, ձեռնարկությունների գործունեության բնույթը և չափը հաշվի առնելով, պետք է սահմանեն, ձեռնարկությունների տարբեր տեսակներ՝ 1-ին պարբերության (ա) և (բ), ինչպես նաև (գ) և (դ) կետերով նախատեսված փաստաթղթերը կազմելիս:

Հոդված 10

Աշխատողներին տրամադրվող տեղեկություն

1. Գործատուն պարտավոր է անհրաժեշտ միջոցառումներ ձեռնարկել, որպեսզի աշխատողները և (կամ) ձեռնարկությունում, և (կամ) հիմնարկում նրանց

ներկայացուցիչները, ձեռնարկության և (կամ) հիմնարկի չափից ելնելով, ստանան, ազգային օրենքների և (կամ) գործելակերպի համաձայն, անհրաժեշտ հետևյալ տեղեկությունները՝

ա) ձեռնարկության և (կամ) ընդհանուր առմամբ հիմնարկի դեպքում յուրաքանչյուր տեսակի աշխատակայանի և (կամ) աշխատանքի դեպքում անվտանգությանն ու առողջությանը սպառնացող ռիսկերի, պաշտպանիչ և կանխիչ միջոցների ու գործողությունների վերաբերյալ,

բ) 8(2) հոդվածի համաձայն ձեռնարկված միջոցների վերաբերյալ:

2. Գործատուն պարտավոր է համապատասխան միջոցներ ձեռնարկել այնպես, որ այլ ձեռնարկությունների և (կամ) հիմնարկների գործատուները, որոնց աշխատողներն աշխատում են իր ձեռնարկությունում և (կամ) հիմնարկում ազգային օրենքների և (կամ) գործելակերպի համաձայն, ստանան համապատասխան տեղեկություն՝ 1-ին պարբերության (ա) և (բ) կետերի վերաբերյալ, որոնք պետք է տրամադրեն տվյալ աշխատողներին:

3. Գործատուն պարտավոր է համապատասխան միջոցներ ձեռնարկել, որպեսզի անվտանգության ու առողջության պահպանման հատուկ գործառույթներ իրականացնելիս այն աշխատողներին կամ աշխատողների ներկայացուցիչներին, ովքեր հատուկ պարտականություն ունեն՝ աշխատողների անվտանգությունն ու առողջությունը պահպանելու համար, իրենց պարտականությունները կատարելու նպատակով, ազգային օրենքների և (կամ) գործելակերպի համաձայն, հասանելի դարձնեն.

ա) 9(1) հոդվածի (ա) և (բ) կետերում նշված ռիսկի գնահատումը և պաշտպանիչ միջոցները,

բ) 9 (1) հոդվածի (գ) և (դ) կետերում նշված ցուցակը և զեկույցները,

գ) տեղեկությունները, որոնք ձեռք են բերվել պաշտպանիչ և կանխիչ միջոցների ձեռնարկման, ինչպես նաև տեսչությունների և անվտանգության ու առողջության պահպանման համար պատասխանատու մարմինների գործունեության արդյունքում:

Հոդված 11

Աշխատողների հետ խորհրդատվություն և մասնակցություն

1. Գործատուները պետք է խորհրդակցեն աշխատողների և (կամ) նրանց ներկայացուցիչների հետ և թույլ տան, որ նրանք մասնակցեն աշխատավայրում անվտանգության և առողջության պահպանման հարցերի վերաբերյալ քննարկումներին:

Սա ենթադրում է՝

– աշխատողներին խորհրդատվությունը,

– աշխատողների և (կամ) նրանց ներկայացուցիչների առաջարկություններ անելու իրավունքը

– հավասարակշռված մասնակցությունը ազգային օրենքների և (կամ) գործելակերպի համաձայն:

2. Այն աշխատողները կամ աշխատողների ներկայացուցիչները, ովքեր հատուկ պարտականություն ունեն աշխատողների անվտանգության և առողջության պահպանման հարցում, ազգային օրենքների և (կամ) գործելակերպի համաձայն, պետք է հավասարակշռված մասնակցություն ունենան կամ պետք է գործատուի հետ նախապես և ժամանակին խորհրդակցեն՝

ա) ցանկացած միջոցի վերաբերյալ, որը կարող է զգալի ազդեցություն ունենալ անվտանգության և առողջության հարցերի վրա,

բ) 7 (1) և 8 (2) հոդվածներում նշված աշխատողների նշանակման և 7 (1) հոդվածում նշված գործողությունների ,

գ) 9 (1) և 10–րդ հոդվածներում նշված տեղեկությունների ,

դ) ձեռնարկությունից և (կամ) հիմնարկից դուրս գտնվող, ինչպես նշված է 7(3) հոդվածում, իրավասու ծառայությունների կամ մարմինների ցուցակագրման,

ե) 12-րդ հոդվածում նշված վերապատրաստման պլանավորման և կազմակերպման վերաբերյալ:

3. Աշխատողների այն ներկայացուցիչները, ովքեր հատուկ պարտականություն ունեն աշխատողների անվտանգության և առողջության պահպանման հարցում, պետք է իրավունք ունենան գործատուին խնդրելու համապատասխան միջոցներ ձեռնարկել և առաջարկություններ ներկայացնել՝ նպատակ ունենալով նվազեցնելու աշխատողներին սպառնացող վտանգները և (կամ) վերացնել վտանգի աղբյուրները:

4. 2–րդ պարբերությունում նշված աշխատողները և 2–րդ ու 3–րդ պարբերություններում նշված աշխատողների ներկայացուցիչները չեն կարող ավելի անբարենպաստ պայմաններում դրվել՝ 2–րդ և 3–րդ պարբերություններում նշված՝ իրենց կողմից իրականացվող համապատասխան գործողությունների պատճառով:

5. Գործատուները պետք է թույլ տան, որպեսզի աշխատողների այն ներկայացուցիչները, ովքեր հատուկ պարտականություն ունեն աշխատողների անվտանգության և առողջության պահպանման հարցում աշխատանքից բավարար ազատ ժամանակ ունենան, առանց աշխատավարձի կորստի և նրանց անհրաժեշտ միջոցներ տրամադրեն՝ նման ներկայացուցիչներին հնարավորություն տալով իրենց իրավունքներն ու գործառույթներն իրականացնելու՝ ելնելով սույն Հրահանգից:

6. Աշխատողները և (կամ) նրանց ներկայացուցիչները իրավասու են բողոքարկելու ազգային օրենքների և (կամ) գործելակերպի համաձայն, այն մարմնին, որն իրավասու է աշխատավայրում աշխատողների անվտանգության և առողջության պահպանման համար, եթե նրանք գտնում են, որ այն միջոցները, որոնք ձեռնարկվել են և գործատուի կողմից ձեռնարկված մյուս միջոցները բավարար չեն՝ աշխատավայրում անվտանգության և առողջության պահպանման համար:

Աշխատողների ներկայացուցիչներին պետք է իրավասու մարմնի կողմից ստուգայցերի ընթացքում դիտողություններ ներկայացնելու հնարավորություն ընձեռել:

Հոդված 12

Աշխատողների ուսուցումը

1. Գործատուն ապահովում է, որպեսզի յուրաքանչյուր աշխատող անվտանգության և առողջության պահպանման վերաբերյալ համապատասխան ուսուցում անցնի, մասնավորապես, նրան տեղեկություններ տրամադրելով և ցուցումներ տալով իր աշխատակայանի կամ աշխատանքի վերաբերյալ.

– համալրման մասին –աշխատանքից փոխադրման կամ աշխատանքը փոխելու դեպքում

–աշխատանքային նոր սարքավորման ներդրման կամ փոփոխման դեպքում

–ցանկացած նոր տեխնոլոգիայի ներդրման դեպքում

Ուսուցումը պետք է կազմակերպել՝

– հաշվի առնելով նոր ու փոփոխված ռիսկերը և,

– անհրաժեշտության դեպքում, պարբերաբար կրկնել այն:

2. Գործատուն ապահովում է, որ այլ ձեռնարկությունների և (կամ) հիմնարկների այն աշխատողները, որոնք ներգրավված են իր ձեռնարկության և (կամ) հիմնարկի աշխատանքներին, իր ձեռնարկությունում և (կամ) հիմնարկում փաստացի համապատասխան ցուցումներ ստանան առողջության և անվտանգության ռիսկերի վերաբերյալ:

3. Աշխատողների այն ներկայացուցիչները, որոնք հատուկ դեր ունեն աշխատողների անվտանգության և առողջության պահպանման հարցում, համապատասխան ուսուցում անցնելու իրավունք ունեն:

4. 1-ին և 3-րդ պարբերություններում նշված ուսուցումը չի կարող անցկացվել աշխատողների կամ աշխատողների ներկայացուցիչների հաշվին:

1-ին պարբերությունում նշված ուսուցումը պետք է անցկացվի աշխատանքային ժամերին:

3-րդ պարբերությունում նշված ուսուցումը պետք է անցկացվի աշխատանքային ժամերի ընթացքում կամ ազգային գործելակերպի համաձայն կամ ձեռնարկության և (կամ) հիմնարկի ներսում կամ դրսում: ԲԱԺԻՆ III

Հոդված 13

ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Յուրաքանչյուր աշխատողի պարտականությունն է որքան հնարավոր է հոգ տանել իր և այլ անձանց անվտանգության ու առողջության համար, որոնց վրա կարող են ազդել իր գործողությունները կամ աշխատավայրում տրվող հանձնարարությունները՝ անցած վերապատրաստման և գործատուի կողմից տրված ցուցումների համաձայն:

2. Աշխատողներն այդ նպատակով պետք է մասնավորապես, իրենց համար անցկացված ուսուցման և գործատուի կողմից տրված ցուցումների հիման վրա՝

ա) ճշգրտորեն օգտագործեն մեքենաները, սարքերը, գործիքները, վտանգավոր նյութերը, տրանսպորտային սարքերը և արտադրության մյուս միջոցները,

բ) ճշգրտորեն օգտագործեն անձնական պաշտպանիչ սարքերը, որոնք տրամադրվում են իրենց և օգտագործումից հետո դրանք վերադարձնեն իրենց համապատասխան տեղը,

գ) ձեռնպահ մնան անջատելուց, փոփոխելուց կամ վերացնելուց տեղակայված անվտանգության սարքավորումները, ինչպիսիք են՝ մեքենաները, սարքերը, գործիքները, շինություններն ու շենքերը, ինչպես նաև անվտանգության նման սարքերը ճիշտ օգտագործեն,

դ) գործատուին և (կամ) հատուկ պատասխանատվություն ունեցող աշխատողներին անմիջապես տեղեկացնեն աշխատանքային այն իրավիճակի մասին, որը լուրջ ու վերահաս վտանգ է ներկայացնում անվտանգությանն ու առողջությանը, ինչպես նաև տեղեկացնեն պաշտպանիչ միջոցների թերությունների մասին,

ե) համագործակցեն, ազգային գործելակերպի համաձայն, գործատուի և (կամ) աշխատողների անվտանգության ու առողջության պահպանման համար պատասխանատու աշխատողների հետ այնքան ժամանակ, որքան անհրաժեշտ է՝ իրավասու մարմնի կողմից առաջադրված խնդիրներն իրականացնելու ու ներկայացված պահանջները բավարարելու համար, որոնք անհրաժեշտ են՝ աշխատավայրում աշխատողների անվտանգությունն ու առողջությունը պահպանելու համար,

զ) համագործակցեն, ազգային գործելակերպի համաձայն, գործատուի և (կամ) անվտանգության ու առողջության պահպանման համար հատուկ պատասխանատվություն կրող աշխատողների հետ այնքան ժամանակ, որքան անհրաժեշտ է գործատուին՝ ապահով աշխատանքային միջավայր և աշխատանքային պայմաններ երաշխավորելու համար, որոնք աշխատանքային գործունեության ընթացքում վտանգ չեն ներկայացնում անվտանգությանն ու առողջությանը:

ԲԱԺԻՆ IV

ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 14

Առողջության հսկողություն

1. Աշխատավայրում աշխատողների առողջությանն ու անվտանգությանը սպառնացող ռիսկերի առկայության պարագայում առողջության հսկողություն ապահովելու համար՝ միջոցներ պետք է ձեռնարկվեն՝ ազգային օրենքների և (կամ) գործելակերպի համաձայն:

2. 1-ին պարբերությունում նշված միջոցներն այնպիսին պետք է լինեն, որպեսզի յուրաքանչյուր աշխատողի համար, իր ցանկությամբ, պարբերաբար առողջության հսկողություն անցկացվի:

3. Առողջության հսկողությունը կարող է կազմակերպվել որպես ազգային առողջապահության համակարգի բաղադրիչ մասերից մեկը:

Հոդված 15

Ռիսկային խմբեր

Խոցելի ռիսկային խմբերը պետք է պաշտպանվեն այն վտանգներից, որոնք հատկապես ազդում են նրանց վրա:

Հոդված 16

Առանձին հրահանգներ. փոփոխություններ

Սույն Հրահանգի ընդհանուր շրջանակը

1. Խորհուրդը, գործելով Հանձնաժողովի կողմից Պայմանագրի 118ա հոդվածի համաձայն ներկայացված առաջարկության հիման վրա, առանձին հրահանգներ է ընդունում՝ ընդգրկելով նաև հավելվածում նշված բնագավառները:

2. Սույն Հրահանգը և, չհակասելով 17-րդ հոդվածում նշված տեխնիկական ճշգրտումների մասին ընթացակարգին, առանձին հրահանգները կարող են փոփոխվել Պայմանագրի 118ա հոդվածով նախատեսված ընթացակարգի համաձայն:

3. Սույն Հրահանգի դրույթները պետք է լիովին կիրառվեն առանձին հրահանգներով նախատեսված բոլոր բնագավառներում՝ չհակասելով առանձին հրահանգներում պարունակվող ավելի մեղմ և (կամ) հատուկ դրույթներին:

Հոդված 17

Կոմիտեն

1. 16(1) հոդվածով նախատեսված՝ առանձին հրահանգներում տեխնիկական ճշգրտումներ կատարելու համար, հաշվի առնելով

– հրահանգների ընդունումը տեխնիկական ներդաշնակեցման և ստանդարտացման ոլորտում և (կամ)

– տեխնիկական առաջընթացը, միջազգային կանոնակարգերում կամ տեխնիկական պայմաններում կատարված փոփոխությունները և նոր արդյունքները,

Հանձնաժողովին աջակցում է անդամ պետությունների ներկայացուցիչներից կազմված կոմիտեն, որին նախագահում է Հանձնաժողովի ներկայացուցիչը:

2. Հանձնաժողովի ներկայացուցիչը Կոմիտե է ներկայացնում ձեռնարկվող միջոցների նախագիծը:

Կոմիտեն նախագծի վերաբերյալ իր եզրակացությունը ներկայացնում է ըստ խնդրի հրատապության՝ նախագահի կողմից սահմանված ժամկետում:

Եզրակացությունն ընդունվում է Պայմանագրի 148(2) հոդվածով սահմանված մեծամասնության կողմից այն որոշումների դեպքում, որոնք Խորհուրդը պետք է ընդունի Հանձնաժողովից ստացված առաջարկի հիման վրա:

Կոմիտեի շրջանակներում անդամ պետությունների ներկայացուցիչների ձայները հաշվարկվում են այդ հոդվածով սահմանված կարգով: Նախագահը ձայնի իրավունք չունի:

3. Հանձնաժողովն ընդունում է նախատեսված միջոցները, եթե դրանք համապատասխանում են կոմիտեի եզրակացությանը:

Եթե նախատեսված միջոցները չեն մշակված կոմիտեի եզրակացության համաձայն, կամ եթե եզրակացություն չի ներկայացվել, Հանձնաժողովը ձեռնարկվող միջոցների վերաբերյալ անհապաղ առաջարկ է ներկայացնում Խորհուրդ: Խորհուրդը որոշում է կայացնում ձայների որակյալ մեծամասնությամբ:

Եթե Խորհրդին դիմելուց հետո երեք ամիս անց Խորհուրդը որոշում չի կայացնում, ապա առաջարկված միջոցներն ընդունվում են Հանձնաժողովի կողմից:

Հոդված 18

Եզրափակիչ դրույթները

1. Անդամ պետությունները ուժի մեջ են դնում սույն Հրահանգի համապատասխանեցման համար անհրաժեշտ օրենքները, կանոնակարգերը և վարչական դրույթները ոչ ուշ, քան 1992 թվականի դեկտեմբերի 31-ը:

Նրանք դրա մասին անմիջապես տեղեկացնում են Հանձնաժողովին:

2. Անդամ պետությունները Հանձնաժողով են ներկայացնում ազգային իրավունքի տեքստերը, որոնք ընդունվում են սույն Հրահանգով կարգավորվող ոլորտում:

3. Անդամ պետությունները յուրաքանչյուր հինգ տարին մեկ անգամ սույն Հրահանգի գործնական կիրարկման վերաբերյալ հաշվետվություն են ներկայացնում Հանձնաժողով՝ դրանում ընդգրկելով աշխատողների և գործատուների տեսակետները:

Հանձնաժողովը դրա մասին տեղեկացնում է Եվրոպական պառլամենտին, Խորհրդին, Տնտեսական և սոցիալական հարցերով կոմիտեին ու Աշխատավայրում անվտանգության, հիգիենայի և առողջության պահպանման հարցերով խորհրդատվական կոմիտեին:

4. Հանձնաժողովը Եվրոպական պառլամենտ, Խորհուրդ ու Տնտեսական և սոցիալական հարցերով կոմիտե սույն Հրահանգի կիրարկման վերաբերյալ պարբերական զեկույց է ներկայացնում՝ հաշվի առնելով 1-3-րդ պարբերությունները:

Հոդված 19

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

Կատարված է Լյուքսեմբուրգում 1989 թվականի հունիսի 12-ին: